ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը օգոստոսի 2018թ.

Ժամը 11[30]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տ. Ղարիբյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի ՊԺԿ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Խ. Սմբատյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

08.08.2018թ., ժամը 10:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Մեքենաների և սարքերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	Ա/Ձ «ՎՈԼՈԴՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ»
2	«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ
3	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
4	«Յունիթուլզ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տես արձանագրությանը կից Հավելված N 1

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ հետևյալ դեպքի.

«Յունիթուլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի համաձայն՝ վերջինս հանդիսանում է ԱԱՀ վճարող կազմակերպություն, քանի որ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկում նշված է ԱԱՀ վճարելու փաստը, սակայն 1-ին չափաբաժնով նախատեսված «4 անիվով խոտհնձիչ մեքենայի» մասով գնային առաջարկում ԱԱՀ վճարելու փաստը նախատեսված չէ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել մասնակցին պարզաբանելու, թե ինչով է պայմանավորված ԱԱՀ չվճարելու հանգամանքը և եթե առկա են դրա հիմնավորումն հավաստող նորմատիվ իրավական ակտեր, ապա դրանք համապատասխան հղումներով ներկայացնել գնահատող հանձնաժողովի քննարկմանը:

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել մասնակցից հայցված պարզաբանումն ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

10.08.2018թ., ժամը 12:00-ին կայացած նիստում, որին հրավիրվել էին 1-ին չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցները, սակայն ներկայացել էր միայն «Յունիթուլզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Քննարկելով «Յունիթուլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը (կցվում է) և ընկերության ներկայացուցչի մեկնաբանությունները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Յունիթուլզ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը գնահատել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, իսկ նույն չափաբաժնի մասով «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները՝ անհամապատասխան: Քանի որ 1-ին չափաբաժնի մասով բավարար գնահատվեց միայն «Յունիթուլզ» ՍՊԸ-ի հայտը, որի տնօրենը նիստին ներկա էր, գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 7.6 կետի 1-ին ենթակետը որոշեց բանակցել մասնակցի հետ՝ առաջարկված գինը նվազեցնելու վերաբերյալ, սակայն մասնակիցը հրաժարվեց նվազեցնել առաջարկված գինը:

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել «Armeps» համակարգում հայտերի էլեկտրոնային գնահատումն իրականացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 **14.08.2018թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Յունիթուլզ» ՍՊԸ-ն, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ն: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Տ. Ղարիբյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Խ. Սմբատյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

14.08.18թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Ընդհանուր գումար /դրամ/	Ա/Ձ Վոլոդյան Նիկողոսյան		Ա/Ձ Դավիթ Պետրոսյան		«Էյչ Գրուպ» ՍՊԸ		«Յունիթուլզ» ՍՊԸ		1-ին տեղ զբաղեցնող մասնակից
					Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Խոտհնձիչ մեքենաներ (Խոտհնձիչ մեքենա 4 անիվով)	հատ	10	3,300,000			2,700,000	3,240,000	3,000,000	3,600,000	2,400,000	2,400,000	«Յունիթուլզ» ՍՊԸ
2	Խոտհնձիչ մեքենաներ (Խոտհնձիչ մեքենա թիթեռ)	հատ	10	2,200,000	1,600,000	1,600,000	1,630,000	1,956,000	2,500,000	3,000,000	750,000	900,000	«Յունիթուլզ» ՍՊԸ
3	Ճանապարհ մաքրող մեքենաներ (Ձյուն մաքրող մեքենա)	հատ	5	3,900,000			3,065,000	3,678,000	3,750,000	4,500,000	1,500,000	1,800,000	«Յունիթուլզ» ՍՊԸ
4	Շղթայավոր սղոց (Բենզասղոց)	հատ	10	1,250,000			815,000	978,000	1,250,000	1,500,000			Ա/Ձ Դավիթ Պետրոսյան

Գնահատող(ԳԱՊ) Տ. Ղարիբյան

Գնահատող Մ. Խալաթյան

Գնահատող Խ. Սմբատյան

Գնահատող Ա. Պապյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան

"Յունիթուլզ" ՍՊԸ

Unitools LTD

Դավիթ Անհաղթ 4 թիվ 44,
Հեռ. 23-96-97
Ֆաքս: 23-96-97
Էլ.Փոստ: unitools@mygarden.am
URL: www.mygarden.am

ք.Երևան «_08_» Օգոստոս 2018թ.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Մեծարգո Հանձնաժողով,

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ Ձեր կողմից բարձրացված հարցի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝

Ընթացակարգի առաջին չափաբաժնում նկարագրված և որոշակի տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքը համապատասխանում է ԱՏԳ ԱԱ 8433 11 ծածկագրին, այն է՝

Մեքենաներ կամ մեխանիզմներ գյուղատնտեսական կուլտուրաները հավաքելու ու կալսելու համար՝ ներառյալ մամլիչ-հասկահավաքները, ծղոտը կամ խոտը հակավորող մամլիչները, խոտհնձի մեքենաները կամ սիզամարգերի հնձիչները, ձվերը, մրգերը կամ գյուղատնտեսական այլ մթերքներ մաքրելու, տեսակավորելու կամ տրամաչափելու համար մեքենաներ՝ բացի 8437 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից՝

- հնձիչ մեքենաներ սիզամարգերի, զբոսայգիների և սպորտային հրապարակների համար՝
  - շարժիչային՝ հորիզոնական հարթության մեջ պտտվող կտրող մասով:

Ընթացակարգի երկրորդ չափաբաժնում նկարագրված և որոշակի տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքը համապատասխանում է ԱՏԳ ԱԱ 8467 29 ծածկագրին, այն է՝

Ձեռքի գործիքներ օդաճնշական, հիդրավլիկ կամ ներկառուցված էլեկտրական կամ ոչ էլեկտրական շարժիչով՝

- մեքենաներ՝ կանաչ ցանկապատները և սիզամարգերը խուզելու համար:

Այսպիսով, թեպետ ընթացակարգի առաջին և երկրորդ չափաբաժիններով ներկայացված ապրանքները նախատեսված են խոտը հնձելու(խուզելու) համար և թեպետ երկու ապրանքների անվանումը մրցույթի կազմակերպիչների կողմից ձևակերպվել է, որպես "**Խոտհնձիչ մեքենա**", այդուհանդերձ ակնհայտ է, որ ԱՏԳ ապրանքների միասնական անվանացանկի առումով դրանք տարբեր ծածկագրերին համապատասխանող տարբեր ապրանքներ են, մասնավորապես, մի դեպքում՝ ***հնձիչ մեքենաներ սիզամարգերի, զբոսայգիների և սպորտային հրապարակների համար՝ շարժիչային՝ հորիզոնական հարթության մեջ պտտվող կտրող մասով***, իսկ մյուս դեպքում՝ ***Ձեռքի գործիքներ օդաճնշական, հիդրավլիկ կամ ներկառուցված էլեկտրական կամ ոչ էլեկտրական շարժիչով՝ մեքենաներ՝ կանաչ ցանկապատները և սիզամարգերը խուզելու համար:***

Ինչ վերաբերում է ԱԱՀ հարկատեսակով հարկմանը, ապա հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված են Ավելացված արժեքի հարկից ազատված

Digitally signed by
MKRTUMYAN
HOVHANNES
1501850636
Date: 2018.08.08
14:27:29 AMST

գործարքներն ու գործառնությունները: Նույն հոդվածի 2-րդ կետի 20-րդ կետով սահմանվում է՝ ***ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի... օտարումը:*** Այսպիսով, օրենսդիրը ***սահմանել է*** ԱԱՀ հարկատեսակից ազատում ԱՏԳ ԱԱ 8433 ծածկագրին դասվող տեխնիկայի օտարման համար և նմանապես ԱԱՀ հարկատեսակից ազատում ***չի սահմանել*** 8467 ծածկագրին դասվող տեխնիկայի օտարման համար:

Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք տրամադրել լրացուցիչ պարզաբանում:

Տնօրեն՝ Հովհաննես Մկրտումյան